ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

գ. Փարաքար 27/05/2024

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամները.

Օնիկ Ախվերդյան, Դավիթ Ախտոյան, Ռուբիկ Աղեկյան, Լիլիթ Ավագյան, Լիանա Գասպարյան, Լյուդվիգ Գյուլնազարյան, Վալոդյա Գրիգորյան, Նելլի Եսայան, Էմին Երիցյան, Ռուդիկ Զեյնալյան, Էմմա Թորոսյան, Մարիամ Իսպիրյան, Գևորգ Խաչատրյան, Մանուկ Ղազարյան, Դավիթ Մինասյան, Հովհաննես Մխիթարյան, Կարեն Մկրտչյան, Հայկազ Սարգսյան, Նեկտար Սարդարյան, Արաքսյա Վարդանյան, Ավետիս Ֆարֆարյան:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խմբակցության հրավերով նիստին մասնակցում էին՝

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը, իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը, մարզպետի խորհրդականներ՝ Դավիթ Թունանյանը, Սերյոժա Գրիգորյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի փոխարինող՝ Լյուդվիգ Գյուլնազարյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը:

Լսեցին.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ որոշման նախագիծը /Զեկ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով և 65-րդ հոդվածով. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 27-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Նախագիծը դրվեց քվեարկության

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ որոշման նախագիծը /Զեկ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

«Ապրելու երկիր» խմբակցության ղեկավար Վալոդյա Գրիգորյանն առաջարկեց նիստը գումարել 2024 թվականի մայիսի 31-ին ժամը 10:00-ին, առաջարկը դրվեց քվեարկության

Կողմ-10 Դեմ-11 Ձեռնպահ-0

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խմբակցության ղեկավար Արաքսյա Վարդանյանն առաջարկեց. *նիստը գումարել 2024 թվականի մայիսի 31-ին ժամը 12:00-ին, առաջարկը դրվեց քվեարկության*

Կողմ-11 Դեմ-10 Ձեռնպահ-0

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.3-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանի 2024 թվականի մայիսի 21-ի հրաժարականը. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացնելու ժամկետ սահմանել 2024 թվականի մայիսի 31 -ին, ժամը 12:00-ն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունն անցկացվելու է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 5-8-րդ մասերով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-10 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին, նիստը հայտարարվեց փակված

Համայնքի ղեկավարի փոխարինող
ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գայանե Մանուկյանը_____